

ԳԻՏԱԿԱՆ ԼՐԱՏՈՒ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԱՆԵԼԻՔՆԵՐԸ

Հայերեն ազգային լեզուն հայ սոցիալիստական հասարակության պետական լեզուն է, այդ լեզվի զարգացումը հասարակության զարգացման կարևոր նախապայմաններից մեկն է: Հայերեն լեզուն զարգացնելու համար անհրաժեշտ է նախ և առաջ ուսումնասիրել այն ժառանգությունը, որը ստեղծվել է այդ լեզվով: Իկյ ժառանգությունը գտնվում է հայերեն գրերով գրված մեծահարուստ գրականության մեջ, գտնվում է հայ ժողովրդի կենդանի խոսվածքներում, բարբառներում:

Լեզվական ժառանգության ուսումնասիրությունը մեծ ջանքեր պահանջող գործ է, բայց եթե իրոք ցանկանում ենք մեր ժամանակակից ազգային լեզուն, այսինքն՝ սոցիալիզմի և կոմունիզմի շինարարության գործիքներից մեկը և մեր ժողովրդի պայքարի ամենակարևոր զենքերից մեկը զարգացնել, մենք պետք է լուծենք այս խնդիրը:

Իկյ խնդիրը կարելի է լուծել:

1. Գրական հուշարձաններում և գրականության մեջ կուտակված հայերեն լեզվի հարստության ուսումնասիրության ճանապարհով: Հայտնի է, որ հայ ժողովրդի լեզուն գրական հնագույն լեզուներից մեկն է: Հայերեն լեզվով գրված գրականությունը բավական հարուստ է: Շնորհիվ այդ գրական լեզվի երկարատև կյանքին՝ հայ ժողովուրդն ունեցել է իր լեզվի պատմության 4 փուլեր՝ գրարարի փուլը, միջին հայերենի փուլը, աշխարհարարի փուլը և ազգային լեզվի փուլը:

Ունենալով զգալի չափով ուսումնասիրություններ, որոնք նվիրված են հայերեն լեզվի զանազան փուլերին, բայց այդ բոլոր ուսումնասիրությունները, չնչին բացառությամբ, լուրջ գիտական բնույթ չեն կրում: Դրանց հեղինակները հանդես են եկել իրրև սիրողների, բանասերների: Հայերեն լեզուն պետք է ուսումնասիրել գիտական լեզվաբանության տեսանկյունով:

Իկյ ուսումնասիրությունը կատարելու համար անհրաժեշտ է ստեղծել բազա, այնպիսի մի բազա, որը իր փաստական տվյալներով լինի բոլորովին ստույգ և զերծ բոլոր ենթադրություններից, այդ բազան պետք է հանդիսանա փաստական նյութերի մի ամբար. սխառնամոլորված, դասավորված այնպես, որ հնարավոր լինի բոլոր տեսակի հարցերի համար տվյալներ գտնել, հիմնավորումներ ու ճիշտ վկայություններ գտնել: Իկյպիսի բազա կարող է լինել մեր ամբողջ գրականության համաբարբառը:

Իկյպիսի համաբարբառ կազմելը պահանջում է աշխատողների շատ մեծ բանակ և նյութական միջոցներ: Մեծ ժողովուրդները, որոնց բյուջեն հնարավորություն է տալիս, այդ կարող են անել, փոքր ժողովուրդների համար այդ գործը բավական դժվար է: Բայց այդ հարցում մեծ և փոքր ժողովուրդների մեջ տարբերություն չկա, շատ մեծ ժողովուրդների գրական լեզվի հուշարձանները հաճախ չեն անցնում 15—16-րդ դարերից այն կողմ, մինչդեռ կան փոքր ժողովուրդներ, ինչպես հույները, որոնց գրական հուշարձանների հնությունը հասնում է մինչև 15-րդ դարը մեր դարաշրջանից առաջ: Մեր գրական հուշարձանների հնությունն էլ հասնում է մինչև մ. զ. 3-րդ դարը:

Մենք հայերու ունենալ մեկ բարերախոսություն. հայ ժողովրդի զավակները գրասեր են եղել և սիրել են իրենց լեզուն, դրա հետևանքով կուտակված է փաստական շատ մեծ նյութ: Իկյպես՝ Մխիթարյանները կազմել են դրաբար լեզվով գրված գրականության համաբարբառ: Գիտնական Նորայր Բյուզանդացին կազմել է միջին հայերենով գրված շատ հուշարձանների համաբարբառը: Իկթմ, երբ մենք ունենալ Սովետական Հայաստանի Գիտությունների ակադեմիա, որը ժառանգում և բազմապատկում է մեր ամբողջ ժողովրդի կուլտուրական արժեքները, պետք է որ նրա մեջ կենտրոնացվեն բոլոր այն արժեքները, որոնք ստեղծվել են հայ ժողովրդի զավակների կողմից աշխարհի զանազան ժայրերում: Եթե այդ հաջողվի, հայ ժողովուրդը կունենա իր կուլտուրական հարստությունների մի երկրորդ գանձարանը՝ Մատենադարանին համարժեք ոջախը:

Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Լեզվի ինստիտուտի վրա պարտավորություն է ընկնում լրացնելու այն, ինչ որ կառարկված է նախորդների կողմից դրարարի և միջին հայերենի համարարրառը ստեղծելու գործում: Այդ նորը միացնելով նախորդին և ունենալով հին հուշարձանների համարարրառը, մենք կստեղծենք մի իսկական գանձարան, մի այնպիսի բաղա, որը հնարավորություն կտա մեզ և հաջորդ սերունդներին լայն չափով վարելու հայերեն լեզվի անցյալի կուլտուրայի ուսումնասիրման և մշակման գործը: Այդ տեսակետից Մատենադարանի հարստությունը ևս աշխատանքի հիմքերից մեկը կդառնա:

Բայց մեր Լեզվի ինստիտուտին կմնա է՝ լավելի մեծ և պատասխանատու գործ՝ կազմել ազգային լեզվով դրված գրականության համարարրառը և դրա հիման վրա մի քանի միլիոնից կազմված այնպիսի քարտարան, որ իր մեջ ամփոփի այդ ամբողջ հարստությունը: Մեր բոլոր հեղինակների գործերը, սկսած Արովյանից մինչև այսօր, պետք է քարտադրել: Կազմելով յուրաքանչյուրի համարարրառն առանձին, բոլոր հեղինակների համարարրառներից պետք է ստեղծել այն քարտակազմը (քաղտաշանը), որի մասին խոսեցինք վերևում:

Այդ աշխատանքը պետք է սկսել հենց այժմ, այսօրվանից և, երևի, պետք էլ ինչի շարունակել շատ տարիներ, դուցե մի քանի տասնյակ տարի: Բայց երբ այդ բոլորը իրականան, այն ժամանակ հայերեն լեզուն ուսումնասիրելու և դարդանալու համար կունենա մի այնպիսի գանձարան, որ նրա դարդացման հնարավորությունը կապահովի մինչև ենթադրվող համաշխարհային լեզվի հաղթանակի ժամանակաշրջանը:

Այդ աշխատանքի սեղանը շատ մեծ միջոցներ և մեծ ջանքեր է պահանջում, բայց դրանից հրաժարվել մենք չենք կարող, եթե չենք ուզում հրաժարվել մեր սոցիալիստական ազդի գոյության հիմնական նախադրյալներից մեկի՝ մեր լեզվի դարդացման նախադրյալներից:

Այդ աշխատանքը, սակայն, պետք է այնպես կազմակերպել, որպեսզի հնարավոր դառնա հայերեն լեզվի ուսումնասիրության գործը ապահովել նաև այսօր: Քարտարանի առկայությունը հնարավորություն կտա գիտության վերջին խոսքով կազմելու հայերենի բացատրական միահատոր, երկհատոր, եռահատոր բառարաններ և, վերջապես, հայերենի ակադեմիական բառարան երկու տասնյակ հատորով, որն իր մեջ կամփոփի հայերեն լեզվի ամբողջ հարստությունը:

Քարտարանը կապահովի նաև հայերեն լեզվի քերականության խոր և փաստավորված ուսումնասիրությունը: Նա կհանդիսանա աղբյուր և տեղեկատու հայագիտական բոլոր գիտությունների համար՝ գրականության, պատմության, կուլտուրայի պատմության, ազգագրության, հնագիտության, արվեստի, արհեստների պատմության և այլն, և այլն: Ամեն ոք, ինչ մասնագիտություն էլ որ ունենա, հայ կուլտուրայի ո՛ր բնագավառով էլ ջանկանա գրադվել, առատ նյութ կդտնի հայերենի այդ քարտարանում: Հայերեն լեզվի քարտարանը կդառնա մի այնպիսի բաղա, որի նմանն այլ ձևով ստեղծել հնարավոր չէ: Երբ քարտարան ունենանք, միայն այն ժամանակ վստահորեն կարող ենք ասել, որ հայագիտական բոլոր ուսումնասիրությունները կտարվեն գիտական բարձր մակարդակով և փաստավորված հիմունքներով:

Այդ քարտարանի հիման վրա կկազմվեն հայոց լեզվի իսկական պատմությունը, հայոց լեզվի գիտական քերականությունը, հայոց լեզվի գիտական տեսությունը: Այդ քարտարանը հնարավորություն կտա կազմելու հայ-ուսերեն, հայ-անգլերեն, հայ-գերմաներեն, հայ-հնդկերեն, մի խոսքով հայ-օտար լեզվի բաղապիսի լավագույն բառարաններ:

2. Ակադեմիայի Լեզվի ինստիտուտի երկրորդ խնդիրն է ուսումնասիրել մեր բարբառները, քանի որ, ինչպես վերևն ասացինք, հայոց լեզվի հարստության երկրորդ պահեստարանը ժողովրդական կենդանի բարբառներն են, ժողովրդական կենդանի խոսվածքները: Այդ ուղղությամբ էլ բավական աշխատանքներ են կատարված, որոնցից առանձնապես արժեքավորները Ն. Աճառյանի աշխատություններն են: Սակայն այդ ամենը այդ գործի թեթևակի սեղանը չեն դնում: Անհրաժեշտ է բարբառների ուսումնասիրության գիտական ժամանակակից մեթոդներ կիրառել, որպեսզի ստանանք մեծ արդյունքներ: Այստեղ ևս անհրաժեշտ է կազմել հայերեն բարբառների բառերի քարտարան, բայց նախքան այդ, անհրաժեշտ է գիտական սկզբունքներով գրի առնել մեծ քանակությամբ բարբառային տեքստեր ոչ միայն բոլոր բարբառներից, այլև բարբառներով խոսող բոլոր գյուղերի կենդանի խոսքից: Դժբախտաբար այդ գործի նկատմամբ մինչև հիմա երևան է բերվել հանցագործ անտարբերություն: Անգամ խոշոր բանահավաքները Ֆոլկլորային

նյութերը զրի առնելիս զրականացրել են բարրառը, աղավաղել են ժողովրդի կենդանի խոսքը, ուստի և վստահելի աղբյուր չեն կարող ծառայել նրա խոսվածքի ուսումնասիրության համար:

Մյուս կողմից, չկան այլևս Հայաստանի բոլոր այն դուռերը, որտեղ խոսվել է բարրառային լեզվով: Հայաստանի տերիտորիայի մեծագույն մասը, ավերի ենթարկվելով, ամայի է դարձել, նրա բնակչությունը կամ կոտորվել է, կամ թուրք բռնակալների յաթաղանից ճողոպրելով՝ ցրվել է աշխարհով մեկ: Դրանցից բարերախտարար մի մասը ապաստանել է Սովետական Հայաստանում և բաշխվել զանազան բարրառներով խոսող միջավայրերում:

Հ. Աճառյանի և մյուսների ջանքերով ընդհանուր գաղափար ունենալով դուռերի մեծ մասի խոսվածքների մասին, կան նույնիսկ տեսքեր, ճիշտ է, փոքրիկ, բայց բնադիր տեքստեր, որոնք խիստ բավական չեն: Այդ ամենը դժվարություններ են ստեղծում մեր ժողովրդական լեզուների ուսումնասիրության համար: Սակայն կա մի ելք, դա այն է, որ հենց այժմյանից սկսենք զրի առնել տեքստեր բոլոր այն դուռերից, որոնցից չունենք, բայց որոնցից մեկ կամ մի քանի ներկայացուցիչներ գեո հիշում են իրենց բարրառները, գեո խոսում են իրենց բարրառներով:

Սովետական Հայաստանում ուսուցման պարտադիր տասնամյա ժամանակաշրջանը արդ կերպով ընդարձակում է զրական լեզվի դործածությունը և մահացնում բարրառային լեզուն, ուստի մինչև 60 տարեկան հայերի բերանում դժվար է մաքուր բարրառային լեզու գտնել: Ամբողջ հուլիսը 60-ից վեր տարիք ունեցող մարդկանց վրա է, որոնք խիստ ժամանակավոր են մեր անցողիկ կյանքում: Եթե այժմ ևեթ և առաջիկա 5 տարում մենք չզրադվենք բարրառային տեքստեր հավաքելով, ապա մենք ժողովրդական լեզվի շատ հարստություններ կկորցնենք: Ուստի շատ հրատապ խնդիր է հայ բարրառագիտությունը լայն ծավալով զարգացնելու, բարրառագիտական աշխատանքները լայն ծավալով վարելու գործը: Այդ ուղղությամբ Ակադեմիայի Լեզվի ինստիտուտը համարյա ոչինչ չի անում և անել էլ չի կարող, որովհետև ունի միայն մեկ աշխատակից, այսինքն՝ մեկ կաթիլ մի ծովի մեջ:

Բարրառների ուսումնասիրության դժուր աշխատանքի որակը բարձրացնելու համար պետք է ունենալ բարրառադրական կարիներ՝ սարքավորված տեխնիկայի այնպիսի գործիքներով, որոնք զրանցում են արտասանությունը, տարրալուծում են հնչյունը, ճշտադույն ձևով ներկայացնում բարրառը: Հրատապ խնդիր է ձայնադրել մեր կենդանի բարրառներից նմուշներ և պահպանել իրրե թանգարանային արժեք ունեցող և մեր ժողովրդի բանավոր կուլտուրայի և լեզվի ստույգ հուշարձաններ:

Այժմ տեխնիկան այդ հնարավորությունը տալիս է, և մեծ հանցանք կլինի չօգտագործել այդ հնարավորությունը:

Բարրառների քարտարանի հիման վրա պետք է կազմել բարրառների ընդարձակ լիակատար բառարան իր անհրաժեշտ վկայություններով. դա կդառնա երկրորդ և շատ կարևոր աղբյուրը ժամանակակից հայերենի զարգացման համար, այլև ժամանակակից հայերենի դիտական ուսումնասիրության համար, ինչպես և մեր լեզվի պատմության և մեր ժողովրդի պատմության բաղմաթիվ խճճված հարցերը պարզաբանելու համար:

Հատկապես բարրառադրական աշխատանքները մենք պետք է շտապենք կատարել, բանի որ մի քանի տարի հետո արդեն ուշ կլինի և այդ աշխատանքները խիստ ու խիստ կդժվարանան ու կլինեն շատ թերի:

Բարրառների դիտական ուսումնասիրության, ինչպես և հայերեն լեզվի, նրա պատմության, կուլտուրայի, հայ ժողովրդի ազգադրության պատմության և այլ հարցերի ուսումնասիրման և ճշտման համար անհրաժեշտ է կազմել հայ բարրառների քարտեզը, ապա նաև բարրառային ասլաս:

Այդ ամենը լայն ծավալ կտա հայերեն լեզվի կուլտուրայի ուսումնասիրությանը և զարգացմանը:

Այդ ամենը կօգնի մեզ նաև մի ուրիշ ուղղությամբ:

Գիտության ու տեխնիկայի նվաճումները հնարավորություն են ստեղծել էլեկտրոնական մեքենաների միջոցով թարգմանություններ կատարել մի լեզվից մյուսը: Այդ տեսակետից առաջնակարգ կդառնան բոլոր այն լեզուները, որոնք ունեն լուրջ և մանրամասն հետադոտություններ և ուսումնասիրություններ: Միայն շատ մանրամասն կերպով հետադոտված և լեզվական բարդ խնդիրները մանր դետալների վերածած լեզուները

կարող են հավակնել մերենայական թարգմանությունների օրյեկտ ծառայելու: Այս տեսակետից մենք հայերս շատ հետ ենք և առայժմ այդ ուղղությամբ որևէ հավակնություն ունենալ չենք կարող:

Եթե վիճակն այսպես մնա, տեխնիկայի դարգացման նման պայմաններում մի երկու տասնյակ տարի հետո մեր լեզուն կընկնի հետամնաց լեզուների շարքը: Բնական է, որ լոլորը, ովքեր գիտակցում են մեր սոցիալիստական հասարակության առաջադիմության, մեր ժողովրդի առաջադիմության շահերը, պետք է ձայն բարձրացնեն մեր լեզվի ուսումնասիրության դործը ծավալելու և լայն ձեռք տանելու օղտին:

Ա. ՂԱՐԻԲԱՆ